www.ni4os.eu

EUROPEAN OPEN SCIENCE CLOUD

Եվրոպական Բաց Գիտության Ամպ
EOSC

NI4OS Europe

NI4OS-Europe

Եվրոպայում Բաց Գիտության ազգային նախաձեռնություններ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄՊ

Եվրոպական Բաց Գիտության Ամպի (EOSC) գաղափարը ձևավորվել է 2015թ-ին՝ որպես լայն ենթակառուցվածքի Եվրոհանձնաժողովի տեսլական՝ միտված աջակցելու և զարգացնելու բաց գիտությունն ու բաց նորարարությունը Եվրոպայում և դրա սահմաններից դուրս:
Ըստ նախատեսվածի EOSC-ը կյանքի կկոչվի 2020թ-ին և կդառնա բոլոր հետազոտողների համար Եվրոպայի վիրտուալ միջավայր՝ տվյալները պահելու, կառավարելու, վերլուծելու և նորից օգտագործելու հետազոտական, նորարարական և կրթական նպատակներով:

EOSC-ի հաջողության տարրերն են՝ բաց, հանրային ֆինանսավորվող և կառավարվող, հետազոտակենտրոն, համապարփակ, բազմազան և բաշխված, փոխգործունակ, ուղղված ծառայություններին և սոցիալական:
EOSC-ի ռազմավարական իրականացման ծրագրի համաձայն EOSC-ի բաղադրիչները «պետք է ստեղծեն անհրաժեշտ վստահություն հետազոտական մեծ համայնքների շրջանում բաց տեղակայման նկատմամբ, ուստի կարևոր է, որ EOSC-ի հետագա մշակումը հետևի այն սկզբունքներին, որոնք խթանելու են դրա իրականացումը»:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

EOSC Կառավարման խորհուրդը

Բոլոր 28 անդամ և 10 ասոցացված երկրները ունեն պատվիրակներ՝ նշանակված՝

- հաստատելու Գործադիր խորհրդի անդամների ցանկը;
- սահմանելու EOSC-ի ռազմավարական կողմնորոշումները (հիմնված Գործադիր խորհրդի խորհրդատվության վրա) և հաստատելու տարեկան աշխատանքային պլանը,
- գնահատելու EOSC-ի իրականացման առաջընթացը,
- ապահովելու համապատասխան անդամ պետությունների/հանձնաժողովի նախաձեռնությունների համակարգումը,
- քննարկելու EOSC-ին աջակցող նոր գործողություններ, ներառյալ դրա երկարաժամկետ կայունությունը:

EOSC Գործադիր խորհուրդը

Համաեվրոպական հետազոտական էլեկտրոնային ենթակառուցվածքների 8 ներկայացուցիչ գումարած 3 անկախ փորձագետ՝ առաջադրված ԵՀ-ի կողմից՝

- Տրամադրելու խորհրդատվություն և աջակցություն EOSC-ի իրականացման առաջընթացի ռազմավարության, կատարման, մոնիտորինգի և հաշվետվության վերաբերյալ ինչպես նշված է EOSC-ի Իրականացման Քարտեզի (SIP) Աշխատակազմի Աշխատանքային Փաստաթղթում, մասնավորապես՝
  - իրականացման ռազմավարական ծրագրի և տարեկան աշխատանքային պլանների տեսքով, և ռազմավարական ու տարեկան աշխատանքային ծրագրերի վերահսկման և ղեկավարման, ինչպես նաև առաջընթացի մոնիտորինգի և հաշվետվությունների առաջարկվող մեխանիզմի տեսքով,
  - ծառայության մատուցման ուղղորդելու կանոններ և գիտական տվյալների փոխգործակցության գործողությունների ծրագիր՝ FAIR սկզբունքների գործարկման համար,
- Տրամադրելու առաջարկություններ 2020-ից հետո EOSC-ի կառավարման համապատասխան մեխանիզմների և հնարավոր ձևերի վերաբերյալ՝ ներառյալ բիզնես մոդելներն ու ֆինանսավորման եղանակները, և թե ինչպես EOSC-ի օգտագործողների բազան կարող է տարածվել պետական հատվածի ու արդյունաբերության վրա:

EOSC Աշխատանքային խմբեր

EOSC-ի Կառավարման պաշտոնական կառուցվածքը 6 Աշխատանքային Խմբերն են, որոնք ապահովելու են համայնքային մոտեցում EOSC-ի արդի մարտահրավերներին: Բացի այդ, ստեղծվել են օպերատիվ խմբեր՝ լուսաբանելու թեմաներ, որոնք հիմնականում համահունչ են EOSC-ի Աշխատանքային Խմբերին՝ ուրվագծում, ուսուցում, ծառայության ներմուծում, տարածում եւ հմտություններ:

EOSC-Ի ԱՊԱԳԱՆ

EOSC Կառավարում - Ասոցիացիա

EOSC Գործընկերությունը իրականություն կդարձնի Եվրոպայում վստահելի, վիրտուալ, դաշնային միջավայրը՝ հետազոտական տվյալները պահելու, փոխանակելու և կրկին օգտագործելու՝ անկախ սահմաններից ու գիտական ոլոտներից: Այն միավորելու է ինստիտուցիոնալ, ազգային և եվրոպական նախաձեռնությունները և ներգրավելու է բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերին՝ մշակելու և տեղակայելու Եվրոպական Հետազոտական Տվյալների Համայնքներ, որտեղ տվյալները կլինեն որոնելի-Findable, հասանելի- Accessible, փոխգործունակ-Interoperable եւ օգտագործելի-Reusable (FAIR). «FAIR տվյալների և գիտության հարակից ծառայությունների ցանցում» այս Եվրոպական ներդրումը կընդլայնի հետազոտողների հնարավորությունները գտնելու, կիսելու և օգտագործելու հրատարակությունները, տվյալները և համակարգչային ծրագրերը՝ բերելով նոր պատկերացումների և նորարարությունների, ավելի բարձր գիտական հետազոտական արտադրողականության և բալելավված վերարտադրողականության գիտության ոլորտում:



EOSC European Partnership Proposal (Draft), 28 May 2020

- Գործընկերությունը գործելու է Բելգիայում տեղակայված EOSC Ասոցիացիայի (AISBL) միջոցով՝ ապակենտրոնացման, թափանցիկության և բաց լինելու սկզբունքներին համաձայն:

- Հիմնական խնդիրներն են՝ համակարգում և համապատասխանեցում (SRIA), մշտադիտարկում և զեկուցում, EOSC տեխնիկական ղեկավարում, FAIR ուսուցում և հաղորդակցություն:

- Ասոցիացիան ըստ էության ռեսուրսներ կստանա անդամավճարների միջոցով: SRIA-ից բխող գործունեությունը կֆինանսավորվի Եվրոպական մակարդակով Եվրոպական հանձնաժողովի կոցմից ստանձնած պարտավորությունների հիման վրա, իսկ ազգային և ինստիտուցիոնալ մակարդակի վրա Ասոցիացիայի անդամներ կողմից:

ԲԱՌԱՐԱՆ

EOSC Պորտալ

EOSC ծառայությունն իրականացվում է վեբ պորտալի միջոցով,որը հեշտացնում է հասանելիությունը EOSC ռեսուրսներին ու դրանց կիրառումը:

EOSC Պորտալի կատալոգ և շուկա

Ինտեգրված հարթակ, որը տալիս է հեշտ հասանելիություն բազմաթիվ ծառայություններին և տարբեր հետազոտական ոլորտների ռեսուրսներին, ներառյալ վերլուծության ինտեգրված գործիքներին

EOSC Ծառայության սահմանում

EOSC համակարգի կողմից իրականացվող EOSC ռեսուրս EOSC համակարգի օգտվողներին պատրաստի օգտագործման հարմարություններ տրամադրելու համար: EOSC ծառայությունները մատակարարվում են EOSC ծառայություններ մատուցողի կողմից համաձայն EOSC ծառայության մատակարարի մասնակցության EOSC կանոններին: EOSC ծառայությունները հաստատվում են EOSC ծառայությունների պորտֆոլիոյի կառավարման կոմիտեի կողմից և EOSC ծառայությունների պորտֆոլիոյի և EOSC ծառայությունների կատալոգի մաս են կազմում:

EOSC Ծառայությունների կատալոգ

Բոլոր գործող EOSC ծառայությունների ցանկը, որոնք կարող են պահանջվել EOSC համակարգի օգտատերերի կողմից: Այն EOSC ծառայության պորտֆոլիոյի ենթակազմում է և EOSC ծառայությունների ռեգիստրի մաս է կազմում:

EOSC Ծառայությունների Պորտֆոլիո

EOSC ծառայությունների ներքին ցանկը՝ ներառյալ նախապատրաստվող, գործող և դադարեցված ծառայությունները: Այս ցանկի մշակումը վերահսկվում է EOSC ծառայության պորտֆոլիոյի կառավարման կոմիտեի կողմից:

EOSC Ծառայության Մատուցող

EOSC համակարգի ադմինիստրատոր, որը համակարգում և մատուցում է EOSC ծառայությունը:

Երրորդ Կողմի Ծառայությունների Մատուցում

EOSC օգտատեր, ով ցանկանում է ներդնել և գործարկել ծառայություն հենվելով մեկ կամ մի քանի EOSC ծառայությունների վրա:

EOSC Մասնակցության Կանոններ

EOSC կառավարման կողմից սահմանված սկզբունքները գործընթացների կառավարման համար, որոնք դերակատարին ուղղորդում են խաղալ EOSC համակարգի օգտատիրոջ (և դրա ցանկացած գործառույթի) դեր :

Հիմնադիր Պայմանագիր

EOSC ծառայության մատուցողի և EOSC մատակարարի միջև փաստաթղթավորված համաձայնագիր, որը սահմանում է EOSC մատակարարի կողմից տրամադրվող EOSC ծառայության բաղադրիչ(ներ)ը, ինչպես նաև դրանց հետ կապված թիրախավորված ծառայությունները:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- Եվրոպական Հանձնաժողովի պաշտոնական փաստաթղթերը և EOSC-ի ստեղծման քայլերը: https://ec.europa.eu/research/openscience/index.cfm?pg=open-science-cloud
- EOSC իրականացման ռազմավարականալան: https://ec.europa.eu/info/publications/european-open-science-cloud-eosc-strategic-implementation-plan_en
- EOSC Պորտալ: https://eosc-portal.eu/
- Փաստաթերթ, Բաց գիտություն: https://ec.europa.eu/info/files/open-science_en
- EOSC Բառարան: https://www.eosc-portal.eu/glossary
- EOSC Դեկլարացիա: https://ec.europa.eu/research/openscience/pdf/eosc_declaration.pdf#view=fit&pagemode=none
- EOSC Գործողությունների ցանկ: https://ec.europa.eu/research/openscience/pdf/eosc_declaration-action_list.pdf#view=fit&pagemode=none

www.ni4os.eu

NI4OS-Եվրոպանֆինանսավորում է ստացել Եվրոմիության «Հորիզոն 2020» հետազոտական եւ նորարարական ծրագրով՝ թիվ 857645 դրամաշնորհային համաձայնագրով